«ԵՐԵՎԱՆԻ ՋԵՐՄԱԷԼԵԿՏՐԱԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ-Ի ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԵՏԻԿԱԿԱՆ ՈԼՈՐՏԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՌՈՂՋԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ՄԱՍՀԱՆՈՒՄՆԵՐԻՆ ԿՑՎԱԾ 8-ՐԴ և 9-ՐԴ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՎԱՍՏՄԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ԵՋԷԿ-ԳՀԾՁԲ-19/152-1

ք. Երևան «11» 11 2019թ.

«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ն ի դեմս գլխավոր տնօրեն Ս. Խաչատրյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և Ֆ/Ա Մադոյան Թորգոմը, (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Էլեկտրաէներգետիկական ոլորտի ֆինանսական առողջացման ծրագրի շրջանակում մասհանումներին կցված 8-րդ և 9-րդ ցուցանիշների ապահովման հավաստման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ նաև ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 3000000 (Երեք միլիոն) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները, ընդ որում՝

ՄԿՑ 8-ի ապահովման ուղղությամբ 1 500 000 (Մեկ միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ.
ՄԿՑ 9-ի ապահովման ուղղությամբ 1 500 000 (Մեկ միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ.

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և կարգով:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[2]: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

---

[2] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է սպանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է **23** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ ՀՀ, ք. Երևան, Արին-Բերդի 3-րդ նրբ, թիվ 3 Արդշինբանկ ՓԲԸ, Շենգավիթ մ/ճ Հ/Հ 2473600002170010 ՀՎՀՀ 02205028	Ֆ/Ա Մադոյան Թորգոմ անձնագիր BA0298488 տրվ. 012-ի կողմից 11.03.2014թ.-ին ք. Երևան, Նազարբեկյան 25 բն 46 հ/հ 1930000759060400
Գլխ. տնօրեն----------Ս. Խաչատրյան /ստորագրություն/ Կ.Տ	---------- (ստորագրություն) Կ.Տ.

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված N 1
« » 2019թ. կնքված
ԵՋԷԿ-ԳՀԾՁԲ-19/152 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը**
1	79311100/1	I. Ներածություն 2011 թվականից սկսած Հայաստանում էլեկտրաէներգիա արտադրող պետական ընկերությունների («ՀԱԷԿ» և «ԵրՋԷԿ» ՓԲԸ-ներ) և մասնավոր բաշխիչ ընկերության («ՀԷՑ» ՓԲԸ) ֆինանսական կենսունակությունը սկսեց վատանալ՝ պայմանավորված մի շարք գործոններով: Մասնավորապես՝ ՀԱԷԿ-ի և ԵրՋԷԿ-ի ֆինանսական վիճակի վատացումը պայմանավորված էր այդ ընկերությունների կողմից հիմնական գործունեության հետ չառնչվող՝ փոխառությունների ներգրավմամբ,	դրամ	3 000 000	1	ք. Երևան, Արին Բերդի 3-րդ նրբանցք, թիվ 3	Համաձայն պայմանագրի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի հավելված 5-ի

		վարկավորմամբ և ծախսերի կատարմամբ, իսկ ՀԷՑ-ը ֆինանսական դժվարությունների մեջ հայտնվեց էլեկտրաէներգիայի ձեռքբերման փաստացի և սակագնի հաշվարկով կանխատեսվող արժեքի, (ընկերության շահութաբերությունը որոշող հիմնական գործոնի) անհամապատասխանության հետևանքով առաջացած վնասների փոխհատուցման ոչ համարժեք մեխանիզմի պատճառով: Էլեկտրաէներգիա արտադրող պետական ընկերությունների ֆինանսական կենսունակությունը վերականգնելու, էլեկտրաէներգիայի բավարար և հուսալի մատակարարում ապահովելու համար ՀՀ կառավարությունը (այսուհետ՝ Կառավարություն) նախատեսել է մի քանի կարևորագույն քայլեր, որոնք իրենց					

		արտացոլում են գտել Կառավարության 2016թ. փետրվարի 18-ի N6 արձանագրային որոշմամբ (40-րդ հարց) հաստատված՝ ՀՀ էլեկտրաէներգետիկական համակարգի պետական ընկերությունների ֆինանսական առողջացման ծրագրում (այսուհետ՝ Ծրագիր): Համաշխարհային բանկն աջակցում է Կառավարությանը՝ Ծրագրի իրականացմանը հետևյալ չորս ուղղություններով՝ - Էլեկտրաէներգիա արտադրող պետական ընկերությունների՝ հիմնական գործունեության հետ չկապված դրամական միջոցների արտահոսքերի դադարեցում, - էլեկտրաէներգիա արտադրող պետական ընկերությունների թանկ առևտրային վարկերի					

		կրճատում, դեբիտորական պարտքերի վերադարձ և բնական գազի դիմաց ԵրՋԷԿ-ի կրեդիտորական պարտքերի մարում, - էլեկտրաէներգիայի մատակարարման արժեքի փոփոխություններն արտացոլող սակագների սահմանումը, - ԵրՋԷԿ-ի ՀՇԳՑ էներգաբլոկի գազատուրբինի արտադրական հզորության պահպանումը: 30 մլն ԱՄՆ դոլար էլեկտրաէներգետիկական ոլորտի ֆինանսական առողջացման ծրագրի շրջանակում Համաշխարհային բանկը աջակցել է վերաֆինանսավորմանը ՀԱԷԿ-ի և ԵրՋԷԿ-ի չմարված առևտրային վարկերի և ԵրՋԷԿ-ի բնական գազի դիմաց կրեդիտորական պարտքերի: Վարկի միջոցներից մասհանումները					

		կատարվում են Համաշխարհային բանկի կողմից աջակցվող ծրագրի շրջանակում մասհանումներին կցված հետևյալ ցուցանիշների (ՄԿՑ) ապահովման դիմաց. 1) *ՄԿՑ 1*՝ ՀԱԷԿ-ի և ԵրՋԷԿ-ի բաժնետիրոջ ժողովի որոշում, որով այդ ընկերություններին արգելվում է կատարել ծախսեր, վերցնել ու տրամադրել փոխառություններ, որոնք կապված չեն հիմնական գործունեության հետ, 2) *ՄԿՑ 2*՝ «Հայգազարդ» ՓԲԸ-ի լուծարում, 3) *ՄԿՑ 3*՝ ՀԱԷԿ-ի կողմից հիմնական գործունեության հետ չկապված նոր ծախսեր չկատարելը, փոխառություններ չվերցնելն ու չտրամադրելը 4) *ՄԿՑ 4*՝ Եր ՋԷԿ-ի կողմից հիմնական գործունեության հետ չկապված նոր					

		ծախսեր չկատարելը, փոխառություններ չվերցնելն ու չտրամադրելը 5) *ՄԿՅ 5՝* ՀԱԷԿ-ի չմարված առևտրային վարկերի մայր գումարների նվազումը 6) *ՄԿՅ 6՝* ԵրՋԷԿ- ի չմարված առևտրային վարկերի մայր գումարների նվազումը 7) *ՄԿՅ 7՝* ԵՋԷԿ-ի կրեդիտորական պարտքի նվազումը 8) *ՄԿՅ 8՝* ՀԷՑ-ի մարժան սակագնային յուրաքանչյուր նոր ժամանակահատվածում լիարժեք պետք է արտացոլի սակագնային նախորդ ժամանակահատվածի ընթացքում ՀԷՑ-ի գնած էլեկտրաէներգիայի կանխատեսվող և փաստացի արժեքի միջև տարբերության հետևանքով գոյացած վնասը (օգուտը)՝ գումարած դրա հետ կապված					

		տոկոսային ծախսը (եկամուտը) 9) *ՄԿՑ 9՝* ԵրՋԷԿ-ի և ՀրազՋԷԿ-ի սակագները, սակագնային յուրաքանչյուր նոր ժամանակահատվածում պետք է արտացոլեն նախորդ ժամանակահատվածում ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար փոխարժեքի տատանման հետևանքով գնված բնական գազի կանխատեսվող և փաստացի արժեքի տարբերությունից առաջացած վնասը (օգուտը) 10) *ՄԿՑ 10՝* ԵրՋԷԿ-ի կողմից մատակարարված էլեկտրաէներգիան: Այդ ցուցանիշների ապահովումը ստուգվում է հավաստման անկախ գործակալների կողմից, որոնք ընտրվում են Երևանի ՋԷԿ-ի կողմից: 1. Նպատակ Այս տեխնիկական առաջադրանքի					

		նպատակն է ստանալ խորհրդատուի անկախ եզրակացությունը՝ ՄԿՑ-ներ 8-ի և 9-ի ապահովման վերաբերյալ: 2. Միջոցառումներ Անկախ հավաստման գործակալը պետք է՝ *1) ՄԿՑ 8-ի ուղղությամբ* - կատարի և ներկայացնի ՀԷՑ-ի կողմից հավաստմանը նախորդած սակագնային ժամանակահատվածում ձեռքբերված էլեկտրաէներգիայի փաստացի և կանխատեսվող արժեքների ձևավորման հաշվարկը՝ Հավելված 1-ում ներկայացված ձևաչափով, - հաստատի, որ յուրաքանչյուր նոր սակագնային ժամանակահատվածի համար ՀԷՑ-ի սակագնային մարժայի հաշվարկն, ըստ Հավելված 2-ի,					

		նախատեսում է համապատասխան փոխհատուցում կամ վերադարձ նախորդ սակագնային ժամանակահատվածում գնված էլեկտրաէներգիայի կանխատեսված և փաստացի արժեքների տարբերության չափով: *2) ՄԿՑ 9-ի ուղղությամբ* - կատարի և ներկայացնի Երևանի ՋԷԿ-ում և Հրազդանի ՋԷԿ-ում բնական գազի կանխատեսված և փաստացի արժեքի միջև ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար փոխարժեքի տատանմամբ պայմանավորված տարբերության հետևանքով առաջացած վնասի (օգուտի) հաշվարկը՝ Հավելված 3-ում ներկայացված ձևաչափով,					

		- հաստատի Երևանի ՋԷԿ-ի և Հրազդանի ՋԷԿ-ի սակագների հաշվարկն, ըստ Հավելված 4-ի, յուրաքանչյուր նոր սակագնային ժամանակահատվածում լիարժեք արտացոլում են նախորդ ժամանակահատվածում գնված բնական գազի կանխատեսվող և փաստացի արժեքի միջև ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար փոխարժեքի տատանմամբ պայմանավորված տարբերության հետևանքով առաջացած վնասը (օգուտը): **3. Ակնկալվող արդյունքներ և ժամկետներ** ՄԿՑ-ներ 8-ի և 9-ի ապահովման ուղղությամբ յուրաքանչյուր գործողության իրականացման ավարտից հետո երկու շաբաթվա ընթացքում, սակայն ոչ ուշ քան յուրաքանչյուր ՄԿՑ-ի թիրախային ցուցանիշի ձեռքբերման					

		հավաստման համար սահմանված վերջնաժամկետը (տես Հավելված 5), անկախ հավաստման գործակալը պարտավոր է Համաշխարհային բանկին և Էներգետիկայի և բնական պաշարների նախարարությանը ներկայացնել գրավոր հաշվետվություն ՄԿՑ-ներ 8-ի և 9-ի ապահովման ուղղությամբ յուրաքանչյուր գործողության՝ սահմանված կարգով կատարման վերաբերյալ: Հաշվետվությունները պետք է ներկայացվեն հայերեն և անգլերեն լեզուներով:					

** ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան փվյալ տարվա դեկտեմբերի 25-ը*

Հավելված 1. Նախորդող սակագնային ժամանակահատվածում ՀԷՑ-ի կողմից գնված էլեկտրաէներգիայի կանխատեսված և փաստացի արժեքների հաշվարկ

Արտադրող կայան	Գնված էլեկտրաէներգիայի կանխատեսված ծավալ (մլն կՎտժ)	Գնված էլեկտրաէներգիայի փաստացի ծավալ (մլն կՎտժ)	Սակագնային ժամանակահատվածի սակագին (ՀՀ դրամ/կՎտժ)	Գնված էլեկտրաէներգիայի կանխատեսված արժեք (մլն ՀՀ դրամ)	Գնված էլեկտրաէներգիայի փաստացի արժեք (մլն ՀՀ դրամ)	Շեղում
1	2	3	4	5 [2x4]	6 [3x4]	7 [6-5]
ՀԱԷԿ						
Երևանի ՋԷԿ						
Հրազդանի ՋԷԿ						
Հրազդան-5						
Որոտան ՀԷԿՀ						
ՄԷԿ						
Կոգեներացիոն կայան						
ՎԷՌ կայաններ						
Հաշվարկային կենտրոնին տրվող վճար						
Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորին տրվող վճար						
ԸՆԴԱՄԵՆԸ						
Էլեկտրաէներգիայի գնման միջին կշռութային սակագին *[Գնված էլեկտրաէներգիայի ընդամենը արժեք/գնված էլեկտրաէներգիայի քանակություն]*, ՀՀ դրամ/կՎտժ						

Հավելված 2. ՀԷՑ-ի նոր սակագնային ժամանակահատվածի սակագնային մարժին հաշվարկ

Խորհրդատու պետք է ՀԷՑ-ի սակագնային մարժին հաշվարկի ներկայացնի ստորև բերված ձևաչափով չԷԱՀ տրամաբանությամբ, ինչպես նաև յուրաքանչյուր տարվա համար՝ ինչպես ներկայացված է հետևյալ աղյուսակում՝ ինչպես նաև տրամաբանությամբ ՀԷՑ-ի կողմից հրապարակված սակագնային մարժին հաշվարկի ձևաչափի:

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	4 [(9/10)-11]
Արժեք		Գնիած էլեկտրէներգիայի արժեք (մեկ ՀՀ դրամ)	Շահագործման և պահպանման ծախսեր (մեկ ՀՀ դրամ)	Մաշվածություն (մեկ ՀՀ դրամ)	Հարկեր (մեկ ՀՀ դրամ)	Ընդհանուր եկամտաբեր (մեկ ՀՀ դրամ)	Թույլատրելի զուտ շահույթ (մեկ ՀՀ դրամ)	Լավագույն տեսակների ժամանակակից գնիած էլեկտրէներգիայի փաստացի և խնայողական արժեքների տարբերությունը շափով փոխհատուցում / վերադարձ (մեկ ՀՀ դրամ)	Ընդհանուր պահանջվող հասույթ (մեկ ՀՀ դրամ) [2+3+4+5+6+7+8]	Իրացված էլեկտրէներգիայի քանակություն (մեկ կՎտ)	Էլեկտրաէներգիայի գնման սակագին (ՀՀ դրամ/կՎտ)	Սակագնային մարժա (ՀՀ դրամ/կՎտ)

ավելված 3. Երևանի ՋԷԿ-ում և Հրազդանի ՋԷԿ-ում բնական գազի կանխատեսված և փաստացի արժեքի միջև ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար փոխարժեքի տատանմամբ պայմանավորված տարբերության հետևանքով առաջացած վնասի (օգուտի) հաշվարկ

Արտադրող կայան	Նախորդ սակագնային ժամանակահատվածում փաստացի վաճառված բնական գազի ծավալ (մլն կՎտժ)	Նախորդ սակագնային ժամանակահատվածում ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար միջին կանխատեսված արժեք	Նախորդ սակագնային ժամանակահատվածում ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար միջին փաստացի արժեք	Նախորդ սակագնային ժամանակահատվածում ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար փոխարժեքի կանխատեսված և փաստացի միջին արժեքների տարբերության հետևանքով առաջացած օգուտ/վնաս (մլն ՀՀ դրամ)
1	2	3	4	5 [(2x(4-3)]
Երևանի ՋԷԿ				
Հրազդանի ՋԷԿ				

Հավելված 4. Երևանի ՋԷԿ-ի և Հրազդանի ՋԷԿ-ի սակագնի հաշվարկ

	Հոդված	Միավոր	Նախորդ սակագնային ժամանակահատված		Նոր սակագնային ժամանակահատված	
			Երևանի ՋԷԿ	Հրազդանի ՋԷԿ	Երևանի ՋԷԿ	Հրազդանի ՋԷԿ
1	Բնական գազի ծախս	մլն ՀՀԴ				
2	Բնական գազի ծախսի ճշգրտող գործակից					
3	Մաշվածություն	մլն ՀՀԴ				
4	Շահագործման և պահպանման ծախսեր	մլն ՀՀԴ				
5	Հարկեր (բացի շահութահարկից և ԱԱՀ-ից)	մլն ՀՀԴ				
6	ՀՀ օրենսդրությամբ նախատեսված հիմնավորված և անհրաժեշտ այլ ծախսեր	մլն ՀՀԴ				
7	Թույլատրելի շահույթ	մլն ՀՀԴ				
8	ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀԱՍՈՒՅԹ	մլն ՀՀԴ				
9	Առաքված էլեկտրաէներգիայի քանակություն	մլն կՎտժ				
10	Միաղրույք սակագին [8/9]	ՀՀԴ/կՎտժ				

Հավելված 5: Անկախ հավաստող գործակալի կողմից ՄԿՑ-ներ 8-ի և 9-ի ապահովման հավաստման ժամանակացույց

Մասհանմանը կցված ցուցանիշ	ՄԿՑ-ի ապահովման վերջնաժամկետ	ԱՀԳ հաշվետվության ստացման վերջնաժամկետ
ՄԿՑ 8՝ ՀԷՑ-ի մարժան սակագնային յուրաքանչյուր նոր ժամանակահատվածում լիարժեք արտացոլում է սակագնային նախորդ ժամանակահատվածի ընթացքում ՀԷՑ-ի գնած էլեկտրաէներգիայի կանխատեսվող և փաստացի արժեքի միջև տարբերության հետևանքով գոյացած վնասը (օգուտը)՝ գումարած դրա հետ կապված տոկոսային ծախսը (եկամուտը)		
	2019թ. դեկտեմբերի 17	2019թ. դեկտեմբերի 31
	2020թ. դեկտեմբերի 17	2020թ. դեկտեմբերի 31
ՄԿՑ 9՝ Երևանի ՋԷԿ-ի և Հրազդանի ՋԷԿ-ի սակագները, սակագնային յուրաքանչյուր նոր ժամանակահատվածում արտացոլում են նախորդ ժամանակահատվածում ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար փոխարժեքի տատանման հետևանքով գնված բնական գազի կանխատեսվող և փաստացի արժեքի տարբերությունից առաջացած վնասը (օգուտը)		
	2019թ. դեկտեմբերի 17	2019թ. դեկտեմբերի 31
	2020թ. դեկտեմբերի 17	2020թ. դեկտեմբերի 31

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, Արին-Բերդի 3-րդ նրբ, թիվ 3
Արդշինբանկ ՓԲԸ, Շենգավիթ մ/ճ
Հ/Հ 2473600002170010
ՀՎՀՀ 02205028

Գլխ. տնօրեն----------Ս. Խաչատրյան
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

Ֆ/Ա Մադոյան Թորգոմ
անձնագիր ԲԱ0298488
տրվ. 012-ի կողմից 11.03.2014թ.-ին
ք. Երևան, Նազարբեկյան 25 բն 46
հ/հ 1930000759060400

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2
« » 2019թ. կնքված
ԵՋԷԿ-ԳՀԾՁԲ-19/152 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության			
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019-2020թթ-ին
1	79311100/1	*Էլեկտրաէներգետիկական ոլորտի ֆինանսական առողջացման ծրագրի շրջանակում մասհանումներին կցված 8-րդ և 9-րդ ցուցանիշների ապահովման հավաստման ծառայություններ*	Ծառայության ավարտի վերաբերյալ արձանագրության հիման վրա՝ ներկայացնելուց հետո 25 օրացուցային օրվա ընթացքում

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, Արին-Բերդի 3-րդ նրբ, թիվ 3
Արդշինբանկ ՓԲԸ, Շենգավիթ մ/ճ
Հ/Հ 2473600002170010
ՀՎՀՀ 02205028

Գլխ. տնօրեն----------Ս. Խաչատրյան
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

Ֆ/Ա Մադոյան Թորգոմ
անձնագիր ԲԱ0298488
տրվ. 012-ի կողմից 11.03.2014թ.-ին
ք. Երևան, Նազարբեկյան 25 բն 46
հ/հ 1930000759060400

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված 3
« » 2019թ. կնքված
ԵՋԷԿ-ԳՀԾՁԲ-19/152 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« » 2019թ. կնքված
ԵՋԷԿ-ԳՀԾՁԲ-19/152 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն